

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 02

Լեբմոնտովո համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 21-ի նիստի.

գ. Լեբմոնտովո

Համայնքի ղեկավարի աշխատասենյակ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Էդիկ Համբարձումի Չախալյանը

Մասնակցում էին՝

Համայնքի ավագանու անդամներ՝ Վիտալի Ասադովը, Քրիստինե Խառատյանը, Վասիլի Կորոլյովը, Անդրեյ Կորոլյովը; համայնքապետարանի աշխատակիցները:

ՆԻՍՏԸ - Էդիկ Չախալյանը ժամը 11:00-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստը վարողն առաջարկեց հաստատել օրակարգը:

Կողմ՝ 4, դեմ՝ 0 ընդունվեց որոշում:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը /N09/՝

1. ՀՀ ԼՍ Լեբմոնտովոյի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

զեկ. Ա. Հարությունյան

2. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալությամբ տրամադրելու մասին

զեկ. Ա. Գալուստյան

3. Լեբմոնտովո համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

զեկ. Ա. Գալուստյան

4. Լեբմոնտովո համայնքի տարածքում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

զեկ. Ա. Գալուստյան

5. Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը աճուրդ վաճառքով օտարելու մասին

զեկ. Ա. Գալուստյան

6. Լեւոնոստովոյի համայնքի 2024-2026 թ-ի Միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին

գեկ. Մ.Բոլոտինա

ԸՆԹԱՑՔԸ՝

1. **ԼՍԵՑԻՆ** - ՀՀ ԼՍ Լեւոնոստովոյի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Անահիտ Հարությունյանը: Նա ներկայացրեց "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքում փոփոխությունների պահանջը և, ըստ դրա հաստիքացուցակում համապատասխան փոփոխությունները:

Քվեարկությամբ, կողմ՝ 4, ընդունվեց որոշում: /N10/

2. **ԼՍԵՑԻՆ** - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալությամբ տրամադրելու մասին նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքապետարանի առաջատար մասնագետ Արտյոմ Գալուստյանը: Նա ներկայացրեց 13.9163հա հողամասը /արոտավայր/, որը առաջարկվում է տրամադրել վարձակալությամբ 25 տարի ժամկետով: Ավագանու անդամները տվեցին իրենք համաձայնությունը: Սահմանվեցին մեկնարկային գինը և մասնակցության վճարը:

Քվեարկությամբ, կողմ՝ 4, ընդունվեց որոշում: /N11/

3. **ԼՍԵՑԻՆ** - Լեւոնոստովոյի համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին նախագիծը

- գեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Արտյոմ Գալուստյանը: Նա ներկայացրեց, որ քաղաքացի Ժ.Ս.Սարգսյանը իրեն պատկանող 0.21617հա խոտհարքի նպատակային նշանակությունը ցանկանում է փոխել գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության: Ուսումնասիրելով քաղաքացու հայտը ավագանու անդամները տվեցին իրենց համաձայնությունը:

Քվեարկությամբ, կողմ՝ 4, ընդունվեց որոշում: /N12/

4. **ԼՍԵՑԻՆ** - Լեւոնոստովոյի համայնքի տարածքում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին նախագիծը

- գեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Արտյոմ Գալուստյանը: Նա ներկայացրեց, որ համայնքի սեփականություն հանդիսացող 0.03325հա մակերեսով բնակավայրի այլ հողեր գործառնական նշանակության հողամասը պետք է

փոխադրել բնակելի կառուցապատման նշանակության հողամասի: Ուսումնասիրելով տվյալ հարցը ավագանու անդամներին տվեցին իրենց համաձայնությունը:

Քվեարկությամբ, կողմ՝ 4, ընդունվեց որոշում: /N13/

5. **ԼՍԵՑԻՆ** - Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը աճուրդ վաճառքով օտարելու մասին նախագիծը

զեկ. Ա.Գալուստյան

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Արտյոմ Գալուստյանը: Նա ներկայացրեց համայնքի սեփականություն հանդիսացող հողամասեր, որոնք ենթակա են օտարման աճուրդ վաճառքով՝ Անտառաշեն բնակավայրում գտնվող երեք լոտ և Լերմոնտովո բնակավայրում գտնվող մեկ լոտ: Համայնքի ավագանու անդամներին սահմանեցին մեկնարկային գները, մասնակցության վճարը, նախավճարի չափը և տվեցին իրենց համաձայնությունը:

Քվեարկությամբ, կողմ՝ 4, ընդունվեց որոշում: /N14/

6. **ԼՍԵՑԻՆ** - Լերմոնտովո համայնքի 2024-2026 թ-ի Միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին նախագիծը

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ Մարիյա Բոլոտինան: Նա ներկայացրեց Լերմոնտովո համայնքի 2024-2026 թթ-ի համար կազմված Միջնաժամկետ ծախսերի ծրագիրը: Ավագանու անդամները ուսումնասիրեցին ներկայացված տվյալները, ստացան իրենց հուզող հարցերը և տվեցին իրենց հավանությունը:

Քվեարկությամբ, կողմ՝ 4, ընդունվեց որոշում: /N15/



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

1. ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ

2. ԽԱՌԱՏՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

3. ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ

4. ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ